

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻԱՐ ԱՎԵՏԻՍ
ԶԱԳԸՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ»
ԾՔԱՆԾԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՌԵՏԻՍ ԶԱԳԸՃԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Գ Ա Հ Ի Է

Մեզի համար անհուն մխիթարություն է հաստատել թե մեր ժողովուրդի
պառկներէն ընտրեալներ սատար կը հանդիսանան սփիւռքի մեր ազգային-
եկեղեցական հաստատութիւններու գոյատեւման ու ծաղկումին իրենց բարո-
յական և նիւթական բոհողութիւններով:

Դուք, յարգարժան Տիար, կը պատկանիք ընտրեալներու շարքին, որ-
պէս եկեղեցաշէն անձնատրութիւն և ազգային բարերար: Ձեր առատաձեռն
նուիրատրութիւններով Դուք միշտ օգնութեան ձեռք երկարած էք ազգային,
բարեսիրական և մշակութային հաստատութիւններուն:

Մեզ քաջ յայտնի է նաև, թե մեծագումար նուիրաբերումով Դուք հաստա-
տած էք հիմնադրամ մը, ի յիշատակ Ձեր ողբացեալ Տիկնոջ՝ Վերծինի, հիմ-
նադրամ, որմէ պիտի օգտուին հայագիտական առարկաներու ուսուցիչնե-
րը: Առատաձեռնութեամբ, հանդիսացած էք նաև հայերէն գիրքերու մեկենաս,
ի քաջալերութիւն հայ գրականութեան գործիչներուն:

Մենք սրտանց կը գնահատենք, Ձեր բազում նուիրատրութիւններն ու
բարերարութիւնները և ընդառաջելով Եգիպտահայոց թեմի բարեխնամ առաջ-
նորդ Գերաշնորհ Տ. Զաւէն արքեպիսկոպոս Չինչինեանի միջնորդութեան,
այսու Հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և
կը ջնորհենք «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» Ա կարգի շքանշանը, մաղթելով,
որ զայն կրէք Ձեր բարի կուրծքին վրայ ազնիւ հպարտութեամբ, բազում եր-
կար տարիներ քաջառողջութեամբ և հոգւոյ խաղաղութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի
Մէնջ». ամեն:

Կարպէ Թ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16 մայիսի
1982 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1130